



“Harmonic Society” Armenian Association of Social Workers  
«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական Կենտրոն

**«Ներդաշնակ հասարակություն»**

**Սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ**

**Գործունեության հաշվետվություն**

**2006-2007թթ**

Հարգելի՛ գործընկերներ, թույլ տվեք ողջունել բոլորիդ և շնորհակալություն հայտնել Վարչությանը 2006-2007 թվականներին բեղմնավոր աշխատանքներ իրականացնելու համար: Ուրախ եմ, Ձեր ուշադրությանը ներկայացնել Վարչության կատարած աշխատանքը և հետևյալ ձեռքբերումները:

1. Նախ, կայացավ Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի տարեկան համաժողովը, որին մասնակցություն ունեցավ նաև Ասոցիացիան: Ֆեդերացիային յուրաքանչյուր տարի կազմակերպում է տարեկան հանդիպում, որին մասնակցում են Ֆեդերացիայի անդամ ասոցիացիաների ներկայացուցիչները՝ քննարկելով մասնագիտական խնդիրներ և հնարավոր լուծումներ: Ասպարեզում դրված է սոցիալական աշխատողների աշխատանքային միջազգային ստանդարտների մշակման հարցը: Այդ նպատակով երկրներին առաջարկ է արվել ներկայացնել պրակտիկ իրավիճակը՝ սոցիալական աշխատողներին կրթությանը, հմտություններին և կարողություններին առաջադրվող պահանջները գործատուների կողմից և աշխատանքի ծանրաբեռնվածությունը շաբաթվա, ամսվա, տարվա կտրվածքով: Ստանդարտները մշակելու համար ինֆորմացիան հավաքվել է նաև՝ ըստ ոլորտների (տարեցներ, երեխաներ և այլն): Հայաստանը նույնպես ներկայացրել է համապատասխան ինֆորմացիան և այժմ սպասում ենք աշխատանքային խմբի կողմից այդ ինֆորմացիայի վերլուծության արդյունքներին:

2. Ասոցիացիան նաև ընդլայնեց իր անդամների թիվը՝ ունանելով անդամներ ՀՀ բոլոր մարզերից՝ թե՛ ուսանողներ, թե՛ պրակտիկ աշխատողներ: Ասոցիացիային անդամակցող սոցիալական աշխատողները թիվը հասել է գրեթե 80-ի: Ասոցիացիայի՝ օր օրի աճող անդամներ թիվը, անհրաժեշտություն է առաջացնում որևէ կերպով



*“Harmonic Society” Armenian Association of Social Workers*  
*«Եերդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա*

կանոնակարգելու աշխատանքները, ուստի նախնական որոշում ընդունվեց ներդնել համակիր անդամների ինստիտուտը: Այս ինստիտուտը նրանց համար է, ովքեր դժվարանում են անդամավճարի վճարման հարցում, բայց ցանկություն ունեն մասնակցելու մասնագիտական միջոցառումներին, օգտվելու տեղեկատվական նյութերից և այլն:

3. Բացի այդ, ոչ բոլոր անդամներն են կարողանում ֆիզիկապես գտնվել Ժողովի հանդիպումներին (հատկապես մարզերում ապրող/աշխատող ներկայացուցիչները), ուստի առաջարկվում է, առաջնորդվել Կանոնադրության համապատասխան կետով, ժողովները կազմակերպել պատվիրակների մասնակցությամբ: Ժողովներին մասնակցելու համար առաջարկվում է, որ պատվիրակը տիրապետի ոլորտին, օժտված լինի բանակցելու կարողությամբ և հավուր պատշաճ ներկայացնի Ասոցիացիայի գործունեությունը:

4. Վերջին 2 տարվա ընթացքում կազմակերպվել են նաև մի շարք հանդիպումներ, որոնցից մեկի ժամանակ Լյուդմիլա Հարությունյանին շնորհվել է սոցիալական աշխատողների ասոցիացիայի պատվավոր անդամի կոչում: Հայաստանում սոցիալական գիտությունների, մասնավորապես՝ սոցիալական աշխատանքի զարգացումն անմիջականորեն կապվում է պրոֆեսոր Լ. Հարությունյանի հետ, նրա շնորհիվ է, որ այժմ համալսարանն ունի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն, նրա շնորհիվ է, որ յուրաքանչյուր տարի մի քանի տասնյակ մասնագետներ են ավարտում համալսարանը և համալրում ոլորտի պրակտիկ մասնագետների շարքը, սոցիալական աշխատանքը սկսում է ճանաչվել՝ երկրում որպես մասնագիտություն: Նկատի ունենալով նրա հատուկ ջանքերը մասնագիտության ներդրման և կայացման հարցում՝ նրան շնորհվել է այդ կոչումը:

5. Ասոցիացիայի ձեռքբերումներից մեկն էլ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրի/ծրագրերի մշակման և իրականացման հանձնառումը: Այն բխում է Ասոցիացիայի առաքելությունից և նպատակներից: Ծրագրերը պետք է ունենան թե՛ մասնագետներին աջակցելու և ոլորտի զարգացմանը նպաստելու բնույթ՝ տարբեր



*“Harmonic Society” Armenian Association of Social Workers*  
*«Եերդաշնակ Հասարակություն» Աշխատողների Ասոցիացիա*

սոցիալական տեխնոլոգիաների, մոդելների մշակմամբ և գործարկմամբ: Սա թույլ կտա նաև որոշակի առումով կայունություն ստեղծել՝ բացի այդ նպաստելով Ասոցիացիայի իմիջի ձևավորմանը, մասնագիտության կայացմանը:

6. 2006-2007թթ. ժամանակահատվածում մոդելավորվել է Գյումրիում հաշմանդամների համար ցերեկային կենտրոնը: Ասոցիացիան համագործակցել է ՀԲ-ի և ԱՍՀՆ-ի հետ՝ առաջարկելով հաշմանդամների աշխատանքային վերականգնման ցերեկային կենտրոնի մոդելը: Ծրագրի շրջանակներում մշակվել է այդ մոդելը, ուրվագծվել են կազմակերպչկաիրավական կառուցվածքը, ներքին աշխատանքային ընթացակարգերը, շահառուների ներգրավման մեխանիզմները, շահառուների աշխատանքի ուղղությունները, պոտենցիալ գործատուների հետ Կենտրոնի աշխատանքի ուղղությունները, շահառուների դեպքերի վարման մեթոդաբանությունը, Կենտրոնի գործունեության ազդեցության չափումը և այլն: Մոդելն ընդունվել է ԱՍՀՆ-ի կողմից և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մոդելի մշակմանը մասնակցած փորձագետներին, որոնք բոլորը Ասոցիացիայի անդամ են:

7. Ասոցիացիայի կարևոր որոշումներից մեկն էր յուրաքանչյուր տարի նշել սոցիալական աշխատանքի միջազգային օրը նույն կառուցվածքով, նույն վայրում՝ ընտրելով թեմատիկ ուղղվածություն: Այս անգամ ևս նշվեց սոցիալական աշխատողների տոնը, ընդ որում՝ նշելով ինչպես միջազգային, այնպես էլ հայաստանյան օրը: Նման հանդիպումները, բացի իրազեկումից և մասնագիտական խնդիրների ու մարտահրավերների մասին ձայն բարձրացնելու փաստից, թույլ են տալիս ձևավորել համագործակցության մշակույթ, հատկապես՝ պետություն-հիշողություն: Ուրախ եմ տեղեկացնել, որ 4 միջոցառումներն էլ անցել են բավական կազմակերպված և մեծ թվով մասնակիցներով. միջազգային օրվա արարողությանը ավելի ակտիվ էին ապագա մասնագետները, իսկ նոյեմբերի 4-ի միջոցառմանը՝ պրակտիկ սոցիալական աշխատողները: Առաջին անգամ 2007 թ. ԱՍՀՆ նախարարը պարզևատրեց տասը պրակտիկ սոցիալական աշխատողների: Շնորհավորելով մեր



*“Harmonic Society” Armenian Association of Social Workers*  
*«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա*

գործընկերներին պարգևատրման կապակցությամբ՝ ուզում եմ ընդգծել, որ սա արդեն նշան է մասնագիտության ճանաչմանը:

Շնորհակալություն

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիայի  
նախագահ

Միրա Անտոնյան